ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ԾԽՈՂ ՏՂԱՅՔ. Ցամախ և մանաւանդ քաղաքաց մէջ ոչ միայն պատանիք, այլ և փոքր տղայք ծխելով կը շրջադային։ Եւ ամենայն ոք զայս տեսնելով անդէն կ'անդրադառնայ այս տեսարանիս անտեղութեան և կը խորհրդածէ, թէ հարկ է օրէնք մի դնել առ 'ի պահպանել զտղայս այդ մահաբեր ախտէ։ Այլ թերեւս կան ևս ոմանք դժբաղդաբար, որք կարևորութիւն չեն տար, ըսելով՝ թէ մի կամ երկու ծխախոտ՝ վնաս չի բերեր, թէպէտ թոյն ևս ըլլայ։ Բայց պէտք է հաւանին թէ այդ սխալ կարծիք է։

Վասն զի տղայք աւելի ևս կը թունաւորին սակաւ մի ծխախոտով, և այն ալ դիւրաւ, որովհետև ծոմ կը ծխեն յաճախ, օգտուելով իրենց ընդ առաջ եղած առիթներէն թէ յարուեստանոցս երթալու ատեն, և թէ օրուան մէջ այս կամ այն տեղ ղրկուած ժամանակ, իրենց տերանց գործոց կատարման համար։ Եւ եթէ հասուն մարդն իսկ ինքզինքը չափաւորելու դժարութիւն կը կրէ, որչափ ևս տղայ մի պիտի նեղուի ատենին ետ կենալու այդ չար ախտէն, մինչդեռ չունի տակաւին կարևոր եղած զօրաւոր կամքն ինք զինքը սանձելու, և 'ի հակառակէն մղեալ է 'ի ծխել իւր փոքր ընկերաց չար օրինակէն։ Եւ յաճախակի սովորութիւնն 'ի զեղծումն կը տանի և կը գլորէ զմարդ։

Իսկ մեծամեծ վնասներն զորս ծխող տղոց վրայ կը տեսնենք, հետեւեալքն են. անոնց փափուկ կոկորդը կը չորցնէ և անհնարին ծարաւով կը տագնապեցնէ զիրենք. այնպէս որ կը բռնադատուին մտնել 'ի գինետուն, ուստի ելնելն չատ դժուարին կ'ըլլայ յետ մի անգամ նստելու։ Այն որ այժմ տերութիւնք կը ջանան ալքոհոլի զարհուրելի սպառման հոսանաց դէմն առնուլ, միթէ լաւագոյն չէ՞ բուն իսկ չարեաց աղբիւրն որոնել, և եթէ կարելի է ցամքեցընել զայն, այսինքն ծխախոտի գործածութիւնը։

Լարենտիոս Պարիսու դպրոցաց վերատեսուչ, չատ անգամ հաստատած է թէ տղոց մեծ մասը, որք իրեն խնամոց յանձնուեր էին, ծխոյ գարշահոտութիւն կը բուրէին։ Վարժարանի մի տեսուչ ալ կը գրէ առ վերոյիշեալն, թէ դպրոցին մէջ երկոտասանամեայ տղոց կէսն կը ծխէ. և 'ի մէջ մետասանամեայ և երկոտասանամեայ մանկանց երրորդ մասն կը ծխէ. իսկ տասն տարեկանէ վար ե. զողքն կը ծխեն, սակայն թիւ մի չի կրնար սահմանուիլ։ Եւ ծխող տղայք, կ'ըսէ, են գրեթէ ամէնքն ծոյլք, անկարողքն և զուրկք փոքրագոյն իսկ բարոյական զօրութենէ։ Բանի մը կարևորութիւն չեն տար. ոչ ինչ կը սիրեն և միշտ խոնջեալ են։ Ջեն ըմբռներ և կամ թէ հաղիւ կ'ըմբռնեն նոյն իսկ ամենապարզ գաղափարները. և յիշողութիւնին և ոչ մի բան կարող է պահել երկար ժամանակ։

Արդ պարզ է թէ ծնողաց և եթէ ուղղչաց մտադիր հսկել անոնց վրայ որք իրենցմէ կախումն ունին, որ մի' գուցէ կանխեն 'ի ծխել տեսնելով հանդերձ անոր վնասն նկատմամբ մարմնոյ առողջութեան, և սարսափելի հետևանքներն բարոյականի մասին, որով տղայոց ապագան բոլորովին անպտուղ և վնասաբեր կ'ըլլայ։

digitised by A.R.A.R.@